ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/2-Ն-1

ք. Երևան «16» հունվարի 2020թ.

«Ջրային կոմիտեն», ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մոդուլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Գասպարյան-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է

- «Արփա-Սևան ջրատարի փականային և ջրաչափական հանգույցների վերազինման ու արդիականացման աշխատանքների անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների» կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **14 400 000** (տասնչորս միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[22]:[1]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին[23]:[2]

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպասնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[23] *Եթե գնման առարկան չեն հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները, ապա սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից:*

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել, այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը

միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ջրային կոմիտե	<<Մոդուլ>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3 էլ. հասցե
ՖՆ վարչություն	info@modul.am հեռ. 011201511
Հ/Հ	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Աշտարակ մ/ճ
ՀՎՀՀ 02555816	Հ/Հ 11500404281400
Կոմիտեի գլխավոր քարտուղարի	ՀՎՀՀ 05020542
պարտականությունները ժամանակավոր կատարող	Տնօրեն
_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	_____ Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 16 » հունվարի 2020 թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/2-Ն ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
2	71241200/525	նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում ***կարդա ստորև	դրամ	14 400 000	14 400 000	1	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վայոց ձոր մարզերի (մարզերի) ընդհանուր սահմանագիծ հատող Սևան ջրի ափամերձ գոտի (մոտավոր վերջնակետերի կոորդինատներ՝ 13սա	*ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 1,5 ամիս*

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Չափաբաժին 2

***ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

<<Արփա-Սևան>> ջրատարի փականային և ջրաչափական հանգույցների վերազինման ու արդիականացման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

<u>Առաջադրանքի պայմանները</u>

Ընդհանուր տվյալներ

1. Համառոտ տեղեկություններ <<Արփա-Սևան>> ջրատարի վերաբերյալ

<<Արփա-Սևան>> ջրատարը կառուցվել է 1963-1981 թվականների ընթացքում՝ Արփա և Եղեգիս գետերի ջրերը Սևանա լիճ տեղափոխելու նպատակով: Ջրատարն ունի 49,10 կմ երկարություն, որից 48,3 կմ կազմում են թիվ 1 և թիվ 2 թունելները, 0,07 կմ՝ Եղեգիս գետի վրայով թունելներն իրար միացնող ջրանցույցը/ակվեդուկ/ իսկ 0,7 կմ՝ հեռացնող ջրանցքը Ծովինարում: Արփա գետի ջրերը կուտակվում են Կեչուտի ջրամբարում, որտեղից հնարավոր է ջրի բացթողումը իրականացնել հետևյալ ուղղություններով.
ա/ թիվ 1 թունելով ջուրը տեղափոխվում է Եղեգիսի կիրճ, որտեղ թիվ 1 և 2 թունելներն իրար միացնող Եղեգիսի ջրանցույցով և թիվ 2 թունելով ջուրը տեղափոխվում է Սևանա լիճ,
բ/ ջրամբարի իրիգացիոն ջրթողով ջուրը բաց է թողնվում Վայքի տարածաշրջանի հողատարածքների ինքնահոս ոռոգման համակարգ:
Արփա գետի բնապահպանական թողքն ապահովվում է ջրամբարի իրիգացիոն ջրթողից սնվող Վայքի ինքնահոս համակարգից:

2. <u>Ջրատարի փականային և ջրաչափական հանգույցների տեխնիկական վիճակը</u>

Շահագործման հանձնելու օրվանից ջրատարի փականային և ջրաչափական հանգույցները կապիտալ նորոգման չեն ենթարկվել: Փոքր հոսքերի դեպքում հնարավոր չի լինում ճշգրիտ բացվածքներ ապահովել, ինչի հետևանքով ջրի կառավարումն իրականացվում է սահմանվածից մեծ շեղումներով: Ֆիզիկապես և բարոյապես մաշված փականային հանգույցների և հաշվառքի սարքերի միջոցով հնարավոր չէ ճշգրիտ կերպով իրականացնել անհրաժեշտ ուղղությամբ ջրի պահանջվող հոսքերի կառավարում, որը ջրի ոչ ճիշտ հաշվառքի և հետևաբար՝ ոչ նպատակային օգտագործման պատճառ է դառնում: Սա վերաբերվում է Կեչուտի ջրամբարի և Եղեգիսի հիդրոհանգույցի փականային հանգույցներին: <<Արփա-Սևան>> թիվ 1 և թիվ 2 թունելներն իրար միացնող Եղեգիսի ջրանցույցի/ ակվեդուկ/ բետոնյա պատերը քայքայված են: Ջրանցույցի պատերի բարձրությունը հնարավորություն չի տալիս առավելագույն քանակի ջուր տեղափոխելու և ջրի մի մասը ջրանցույցից թափվում է Եղեգիս գետը:

3. Ջրատարի փականային և ջրաչափական հանգույցների տեխնիկական վիճակի բարելավման և արդիականացման նպատակով անհրաժեշտ է՝

3.1 Կեչուտի հիդրոհանգույց

3.1.1 Բոլոր փականների վերանորոգում, վերազինում, էլեկտրոնային տվիչների տեղադրումով
3.1.2 Բոլոր փականների հեռահար դիտման հնարավորություն
3.1.3 Ջրաչափական հանգույցների կառուցում
ա/ ոռոգման խորքային փական՝ ոռոգման նպատակով բացթողնվող ջրի քանակը հսկելու համար,
բ/ ներքին բյեֆում բնապահպանական ելքի ապահովման համար
գ/ «Արփա-Սևան» թիվ 2 թունելի մուտքամաս
3.1.4 <<Արփա-Սևան>> թիվ 1 թունելի մուտքամասում տեղադրել ավտոմատ աղբորսիչ
3.1.5 Հիդրոհանգույցի էլեկտրական համակարգի վերանորոգում:

3.2 Եղեգիսի հիդրոհանգույց
3.2.1 Ջրընդունիչի ուսումնասիրություն և առաջարկություն վերանորոգելու համար
3.2.2 Ջրընդունիչից դեպի «Արփա-Սևան» թիվ 2 թունել հեռացնող ջրանցքի մուտքի պատուհանների վերանորոգում (ճաղավանդակ աղբորսիչի ավտոմատ հանգույց)
3.2.3 Հեռացնող ջրանցքի վերակառուցում և պատերի բարձրացում
3.2.4 Բոլոր փականների վերանորոգում և արդիականացում
3.2.5 Սեգմենտային փականի հատակի սալի վերակառուցում
3.2.6 Ջրաչափական կետերի կառուցում հետևյալ հանգույցներում՝
ա/ Եղեգիս գետից «Արփա-Սևան» մոտեցնող ջրանցքի վրա,
բ/ Ակվեդուկից դեպի Եղեգիս գետ թափվող ջրթողի վրա,
գ/ սեգմենտային փականով Եղեգիս գետ բաց թողնվող բնապահպանական ելքի վրա,
դ/ «Արփա-Սևան» թիվ 2 թունելի մուտքամասի վրա:
3.2.7 Ակվեդուկի պատերի բարձրացում ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ ուժեղացում:
3.4 Ծովինարի տեղամաս
3.3.1 Ծովինարի տեղամասում, թիվ 2 թունելի ելքամասի վրա տեղադրել ջրաչափական հանգույց:
3.4 Ստեղծել կառավարման ծրագիր, որով հնարավոր կլինի կառավարման կենտրոնից հսկել և շահագործել «Արփա-Սևան» ջրատարի ջրաբաշխման համակարգը:

4. 3-րդ կետով նախատեսվող, աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է կատարել ուսումնասիրություններ, կազմել նախագծանախահաշվային փաստաթղթեր և տրամադրել փորձաքննության եզրակացություն:
Շինարարական աշխատանքների իրականացման գնման փաթեթը կազմելու համար կնքված և ստորագրված տարբերակով Կատարողը Պատվիրատուին պետք է ներկայացնի.
- աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների, աշխատանքային ռեսուրսների, լիցենզիաների ցանկը, կատարվող աշխատանքների երաշխիքային ժամկետները:
- գծագրեր՝ ընդհանուր բացատրագրով – 5 օրինակ հայերեն, 1 օրինակ ռուսերեն
- աշխատանքների ծավալների ցուցակ – 5 օրինակ հայերեն, 1 օրինակ ռուսերեն
- նախահաշիվ – 4 օրինակ հայերեն, 1 օրինակ ռուսերեն
- Ծավալաթերթ-Նախահաշիվ 1-ական օրինակ հայերեն և ռուսերեն լեզվով:

Աշխատանքի ծավալների ցուցակները, գծագրերը և նախահաշիվները Պատվիրատուին ներկայացվում են նաև էլեկտրոնային կրիչով՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:
Բոլոր գծագրերը պետք է պատրաստվեն՝ օգտագործելով համակարգչային CAD ծրագիրը և

համապատասխանեն A0 կամ A1 չափին: Բոլոր փաստաթղթերն ու զեկույցները պետք է լինեն A4 ձևաչափով տպագրված: Նախագծային աշխատանքների տևողությունը՝ 1,5 ամիս: ՆՇՈՒՄ. Կատարողը, առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության, չի կարող սեփականացնել, օգտագործել կամ հրապարակայնորեն տարածել հիշյալ աշխատանքների փաստաթղթերը:

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	1,5 ամիս

Աշխատանքի կատարման հասցեն
ՀՀ Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի տարածք (Արփա-Սևան ջրատար)
Նշված աշխատանքների ձեռքբերումն իրականացվելու է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր կատարող

_____Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Մոդուլ>> ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3 էլ. հասցե
info@modul.am հեռ. 011201511
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Աշտարակ մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542
Տնօրեն

_____Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 16 » հունվարի 2020 թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/2-Ն ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	71241200/525	նախագծերի պատրաստում ծախսերի գնահատում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր կատարող

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Մոդուլ>> ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3 էլ. հասցե
info@modul.am հեռ. 011201511
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Աշտարակ մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542
Տնօրեն

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«16» հունվարի 2020 թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/2-Ն ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2020թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2020թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2020թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«16» հունվարի 2020 թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/2-Ն ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 2020 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2020թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն